

ՀՐԱՎԵՐ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

«Արդյունքների գնահատում Համայնքային ջրամատակարարման (ՀՋ) և Ոռոգման բաշխման փոքր և միջին համակարգերի (ՈԲՓՄՀ) ենթաբաղադրիչների շրջանակում» IRFSP/TA/CQS-2019/013

Հայաստանի Հանրապետություն

"Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիր

Խորհրդատվական Ծառայություններ՝ *Ընտրություն խորհրդատուի որակավորման հիման վրա*

ԳԶՄՀ Փոխառություն No 2000000779

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ փոխառություն է ստացել Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամից /այսուհետ՝ ԳԶՄՀ/ "Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիրը /այսուհետ՝ ԵԳՖԱՄ / իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

Ծրագրի նկարագիր՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (ԳՏՁ ՕԻԳ) իրականացնում է գյուղական համայնքների զարգացման ծրագրեր: Ընթացիկ «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրի» (ԵԳՖԱՄ) նպատակն է բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական կարգավիճակն ընտրված գյուղական տարածքներում, որտեղ աղքատությունը տարածված է, ստեղծելով եկամուտների աճի և զբաղվածության ապահովման կայուն հնարավորություններ՝ գյուղատնտեսական արտադրության համակարգերի և ապրանքային մշակաբույսերի արտադրության արժեզրոյի օղակների միջև առաջընթաց ու հետընթաց կապերի հզորացման ճանապարհով: Ծրագրի հատուկ նպատակներն ուղղված են Հայաստանի ընտրված մարզերի գյուղական տարածքներում աղքատության խնդրի լուծմանը հետևյալ ուղիներով. (i) փոքրածավալ տնտեսությունների արտադրողականության, հետարտադրական գործընթացների արդյունավետության բարձրացում և անցում բարձրարժեք մշակաբույսերի աճեցմանը, (ii) գյուղմթերքներ վերամշակող կազմակերպությունների և գյուղացիական փոքր ու աղքատ տնտեսությունների միջև կապի հաստատում՝ նրանց համար հասանելի դարձնելով տեղական ու միջազգային շուկաները և ստեղծելով զբաղվածության հնարավորություններ աշտեզրոյի շրջանակում, (iii) տեղումների մակարդակի տատանումների նկատմամբ գյուղատնտեսական արտադրական համակարգերի ճկունության բարելավում և (iv) սննդի անվտանգության բարելավում՝ ապահովելով գյուղատնտեսական արտադրանքի և ընտանեկան առողջապահության որակի բարձրացում՝ տնային տնտեսությունների ջրամատակարարման բարելավման միջոցով:

Ծրագիրը ներառում է 5 հիմնական բաղադրիչ. (i) Գյուղական ֆինանսավորում, (ii) Գյուղական տարածքների ջրամատակարարման ենթակառուցվածքներ, (iii) Ֆերմերների իրազեկում և աջակցություն, (iv) Ծրագրի կառավարում և (v) Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հոդերի կայուն կառավարում:

Առաջադրանքի նպատակ

Սույն առաջադրանքի նպատակն է գնահատել գյուղական տարածքների ջրամատակարարման ենթակառուցվածքների բաղադրիչի արդյունքները՝ շահառու համայնքներում կատարելով ուսումնասիրություն, ըստ Առաջադրանքի Պայմաններում նշված պահանջի: Արդյունքների ուսումնասիրությունը /ԱՌԻ/ կկենտրոնանա նորացված Տրամաբանական հենքից ծրագրային ցուցանիշների վրա, որոնք մանրամասն ներկայացված են Առաջադրանքի պայմաններում:

Իրականացվելիք հիմնական առաջադրանքներ

Խորհրդատուն 29 ջրամատակարարման և 9 ոռոգման շահառու համայնքներում պետք է իրականացնի կարճաժամկետ արգոյունքների գնահատում/տվյալների հավաքագրման հետևյալ մեթոդաբանությամբ.

1. **Առաջնային տվյալների հավաքագրում**, որը կներառի ինչպես քանակական, այնպես էլ որակական տվյալների հավաքագրման մեթոդները: Կատարվելիք վերլուծությունը պետք է ներառի ծրագրի կարճաժամկետ և երկարաժամկետ արդյունքների հիմնական ծավալները և ենթակառուցվածքային օբյեկտների էֆեկտիվության, արդյունավետության և կայունության հավանականության ընդհանուր գնահատումը (կիրառելի լինելու դեպքում): Այս գնահատումները հիմնված կլինեն ֆինանսական և տեխնիկական տվյալների համադրության վերլուծության վրա.

➤ Շահառուների ուսումնասիրություն

Ուսումնասիրության և տվյալների վերլուծության իրականացման նպատակով պետք է կիրառվեն հետազոտության քանակական մեթոդներ.

Գնահատումը պետք է կազմակերպվի չորս փուլով՝ ըստ ստորև նկարագրված աշխատանքների.

Փուլ 1. Նախապատրաստական աշխատանք՝ ա) տեսական ուսումնասիրություն, հավաքագրում և ծանոթացում առկա ծրագրային փաստաթղթերի, հաշվետվությունների, հանրապետական մակարդակով տվյալների հետ, բ) մեթոդաբանության և աշխատանքային պլանի մշակում, գ) սույն ԱՊ-ի Հավելված 1-ում մանրամասն նկարագրված ցուցանիշների հիման վրա հետազոտության գործիքների (հարցաշարեր) մշակում, ինչպես նաև տվյալների մուտքագրման առցանց հարթակի ստեղծում:

Փուլ 2. Դաշտային աշխատանք՝ դ) դեմ առ դեմ հարցազրույցներ ծրագրի շահառուների հետ: Ուսումնասիրությունը պետք է իրականացնի ընտրված Ծառայություն մատուցողի կողմից ներգրավված, ուսուցում անցած հարցազրուցավարների/հարցում անցկացնողների թիմը: Հարցումը կատարելու նպատակով ՆՏՀՏ-ի (Նոր տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, NICT) կիրառումը ցանկալի է (սերվերներին և տվյալների շտեմարաններին միացված պլանշետ և այլն): Ծառայություն մատուցողից կպահանջվի նաև կատարել ուսումնասիրության (տնային տնտեսություններ /ֆերմերային տնտեսություններ) և դրա արդյունքների աշխարհագրական քարտեզավորում:

Փուլ 3. Տվյալների մաքրում և մուտքագրում՝ ե) ուսումնասիրության տվյալների մուտքագրում և մշակում համապատասխան վիճակագրական համակարգչային ծրագրի (SPSS, Microsoft Excel) միջոցով:

Փուլ 4. Վերլուծություն՝ գ) ուսումնասիրության արդյունքների վերլուծություն, է) արդյունքների քննարկում թիմի հետ, (ժ) արդյունքների գնահատման հաշվետվության կազմման և վերջնական տեսքի բերման աշխատանքեր:

Ընտրանքի ձևավորում՝ Համապատասխան մեթոդաբանություն պետք է կիրառվի՝ ձևավորելու ներկայացուցչական ընտրանք, որը կարտացոլի տվյալ բնակչության բնութագիրը: Կիրառված մեթոդաբանությունը պետք է ապահովի հավասարակշռությունը Ծրագրի թիրախ հանդիսացող բոլոր տարածքների միջև: Ընտրանքը պետք է ներառի ծրագրի թիրախային շահառուների ներկայացուցիչներից կազմված աշխարհագրորեն և գենդերային առումով հավասարակշռված խումբ: Ընտրանքի միավորը պետք է հստակորեն սահմանված լինի:

ՀՁ-ի ընտրանքի շրջանակը ներառում է 29 թիրախային համայնքներում գտնվող 12940, իսկ ՈԲՓՄՀ-ի ընտրանքի շրջանակը՝ 9 համայնքներում - 3255 տնային տնտեսություն: Ընտրանքի չափը պետք է որոշվի 4% վստահության միջակայքով և 95% վստահության մակարդակով:

Ուսումնասիրության իրականացման և տվյալների վերլուծության համար պետք է կիրառվեն հետազոտության որակական մեթոդներ՝ հարցվողների տեսակետներն ուսումնասիրելու համար:

➤ **Խորքային հարցազրույց հիմնական տեղեկություններ տրամադրողների հետ**

Խորքային հարցազրույցներ պետք է անցկացվեն Համայնքային ջրամատակարարում (ՀՁ) և Ոռոգման բաշխման փոքր և միջին համակարգեր (ՈԲՓՄՀ) բաղադրիչների շրջանակում կատարված ներդրումներից օգտվող բոլոր 38 համայնքների գյուղապետերի և ջրամատակարարման համակարգերի շահագործման և պահպանման համար պատասխանատու կառույցների հետ:

➤ **Ֆոկուս խմբային քննարկումներ (ՖԽՔ)**

Յուրաքանչյուր համայնքում պետք է անցկացվի ֆոկուս խմբային քննարկում՝ շահառու խմբերի կարծիքներն ու ընկալումներն արձանագրելու նպատակով: Տվյալները պետք է մուտքագրվեն և մշակվեն համապատասխան վիճակագրական ծրագրի միջոցով (MAXQDA):

2. Երկրորդային տվյալների հավաքագրումը ներառում է վստահելի աղբյուրներից հասանելի տեղեկատվության հայտնաբերում, ներառյալ, ի թիվս այլոց, հետևյալ աղբյուրներից՝ ազգային վիճակագրություն, գիտական ուսումնասիրություններ, ֆինանսական հաստատությունների հաշվետվություններ, Հայաստանում Գյուղատնտեսության Չարգացման Միջազգային Հիմնադրամի նախորդ /ԳԶՄՀ/ ծրագրերի վերջնական գնահատման հաշվետվություններ և այլն:

ԱՈԻ-ն պետք է ներառի ըստ սեռի տարանջատված տեղեկատվություն բոլոր համապատասխան ցուցանիշների համար:

Ներկայացման ենթակա հաշվետվություններ

- Արդյունքների ուսումնասիրության հաշվետվությունների ներկայացումը կկատարվի ըստ Առաջադրանքի պայամաններում նկարագրված պահանջների:

Խորհրդատուին ներկայացվող պահանջներ

- Գյուղատնտեսության ոլորտում (այդ թվում՝ սոցիալական և արտադրական ջրամատակարարման ենթակառուցվածքներ) տարատեսակ հետազոտությունների (արդյունքների ուսումնասիրություն, տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ, ազդեցության գնահատում և այլն) նախագծման և անցկացման աշխատանքային փորձ:
- Մոնիթորինգի և գնահատման, հաշվետվությունների կազմման և փաստաթղթերի ներկայացման կարողություններ:
- Վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն մեկ նմանատիպ աշխատանքային փորձ:

Խորհրդատուի հիմնական անձնակազմի որակավորումն ու փորձը

Թիմը պետք է լինի բազմամասնագիտական, քանի որ Արդյունքների ուսումնասիրությունը եզրակացությունների հանգելու, դասեր քաղելու և հետագա ծրագրերի ուղղվածությունը որոշելու հնարավորություն է:

- Մագիստրոսի աստիճան հասարակական գիտությունների, զարգացման գիտությունների կամ տնտեսագիտության ոլորտներում, ապացուցված փորձ սոցիալական հետազոտությունների ոլորտում (ներառյալ, սակայն չսահմանափակվելով, գյուղատնտեսություն, տնտեսական և գենդերային ծրագրեր):
- Տեղական ազգային կազմակերպությունների և պետական գերատեսչությունների հետ արդյունավետ փոխգործակցության փորձ:
- Գյուղական վայրերում հետազոտությունների անցկացման հմտություններ և փորձ:
- Մասնակցային գյուղական գնահատման գործիքների՝ որպես ազդեցության գնահատման նպատակով տվյալների հավաքագրման միջոցի կիրառման ապացուցված փորձ:
- ՆՏՏ-ի և GIS-ի կիրառման փորձ:
- Հայերեն և անգլերեն բանավոր և գրավոր հաղորդակցական լավ հմտություններ:
- Վերլուծական և հաշվետվություններ գրելու գերազանց հմտություններ:

Ընտրության չափանիշները հետևյալն են.

Չափանիշը	Բալերը
Ընկերության ընդհանուր փորձը (տարիների քանակը) համապատասխան ոլորտում	10
Վերջին հինգ տարիների ընթացքում կնքված նմանատիպ պայմանագրերի քանակը	10
Հիմնական աշխատակազմի ընդհանուր փորձը և որակավորումը	20
Հիմնական աշխատակազմի ծրագրին առնչվող փորձը և որակավորումը	50
Լեզվի իմացությունը	10

Հետաքրքրության հայտը ներկայացվում է հայերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն:

Աշխատանքների իրականացման ենթադրվող ժամկետը՝ մոտ 4 ամիս:

Խորհրդատուն ընտրվելու է ԳԶՄՀ-ի կողմից 2010թ. <https://www.ifad.org/documents/10180/cd15e696-26e2-45df-abcc-3d4611a9a20b/> սեպտեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն:

Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-18.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2019թ. դեկտեմբերի 20-ը, ժ. 17.00:

“Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊՀ

Գնումների բաժնի պետ՝ Արթուր Գրիգորյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6 հարկ;

Հեռախոս՝ 374 10 – 54 – 65 -10; Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -58; e-mail: procurement@raed.am